ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

ՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՐՁԱՆ-ԿՈԹՈՂԻ ՆԱԽԱԳԾԻ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ

ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- Հուշաձանը պետք է մարմնավորի հայոց նորագույն պետականության հիմնադրի, պետական և հասարակական գործչի կերպարը, արտահայտի նրա ազգային-գաղափարական արժեքը:

- Հուշարձանի տեղադրումը նախատեսվում է Արամի և Նալբանդյան փողոցների խաչմերուկին հարող տարածքում՝ համաձայն կից ներկայացված սխեմայի:

- Հուշարձանի պատվանդանի համար առաջարկվող հողատարածքը չպետք է գերազանցի 16.0մ ^{2}:

- Հուշարձանի գաղափարական հորինվածքը, չափերի և նյութի ընտրությունը թողնվում է հեղինակի հայեցողությանը:

- Հուշարձանի դիրքը պետք է ապահովի լավագույն դիտակետեր և նպաստի տարածության մեջ՝ մասշտաբի առումով ճիշտ ընկալմանը:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՅՈՒԹԵՐՆ ԵՆ

- Տարածքի գլխավոր հատակագիծը Մ 1:1000,
- Ճարտարապետական փռվածքները, հուշարձանի մասշտաբը, ձևը և նյութը արտահայտող գծագրերը Մ 1:50,
- Հուշարձանի հիմնական մասի մանրակերտը,
- Բացատրագիրը /2 օրինակ /,

  Անհրաժեշտության դեպքում կարելի է ներկայացնել առաջարկը պարզաբանող լրացուցիչ նյութեր:

ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ

- Առաջին մրցանակ -- հեղինակը /հեղինակային խումբը/ ստանում է հուշարձանը իրականացնելու իրավունք:
- Երկրորդ մրցանակ -- հեղինակը /հեղինակային խումբը/ պարգևատրվում է 1500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամով,
- Երրորդ մրցանակ -- հեղինակը /հեղինակային խումբը/ պարգևատրվում է 1000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամով:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- Մրցութային առաջակությունները ներկայացվում են ոչ ուշ, քան 2017թ. օգոստոսի 10-ը հետևյալ հասցեյով. Արգիշտի փողոց հ. 1, հարկ 2-րդ:
- Գծագրերի աջ կողմում վերևի անկյունում վեցանիշ թվով նշվում է նախագծի ծածկագիրը՝ շրիֆտի բարձրությունը 15 մմ:
- Գործը ներկայացնելիս փակ ծրարի մեջ համապատասխան ծածկագրով ներկայացվում է հեղինակը կամ հեղինակային կազմը և մասնակցության տոկոսը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Մանրամասների համար այցելեք Երևանի քաղաքապետարանի www.yerevan.am պաշտոնական կայքը:





ՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆ - ԿՈԹՈՂԻ

ՏԵՂԱԴՐՄԱՆ ՍԽԵՄԱ

/ԱՐԱՄԻ ԵՎ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԽԱՉՄԵՐՈՒԿԻՆ ՀԱՐՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ/




Музей
бассейн
Ул. Налбандяна
5КЖ
3КН
7КЖ
фонтан
М станция
КЗЖ
столовая
Госстрой
строиплощадка